# ԵՐՈՒԽԱՆԻ ՆՈՎԵԼՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Իրականության գեղարվեստական արտացոլումը Երուխանի նովելներում հատկանշվում է այդ ժանրի համար շատ էական առանձնահատկություններով՝ իրապաշտություն, կյանքի գեղարվեստական ընկալում և վերարտադրություն. հակիրճ ձև: Առհասարակ Երուխանի նկարագրին խորթ մնաց նովելի ժանրում նորարար լինելու ձգտումը, սակայն իր տաղանդն ու գրական դավանանքը աննկատելիորեն նրան դարձրին իսկապես նորարար: Նա ընդլայնեց արևմտահայ գրականության թեմատիկան՝ պատկերելով հասարակ, մոռացված ու անանուն մարդկանց մի ամբողջ աշխարհ:

Ընդհանրապես արևմտահայ գրականության մեջ իրապաշտական շարժումը աչքի էր ընկնում հասարակ ժողովրդի կյանքին մոտենալու, նրա մեջ թափանցելու ազնիվ ձգտումով: Գրական ստեղծագործության համար շատ կարևոր սյուժեներ տվող կյանքի համակողմանի ընդգրկման տեսակետից Երուխանը կարողացավ խորը թափանցել հասարակ աշխատավոր մարդկանց կյանքի մեջ:

Երուխանի նովելների հերոսները մեծ մասամբ ծովի մարդիկ են: Նրանք աչք են բացել ծովափին, անհոգ օրերին զմայլվել նրանով: Ծովը նրա նովելներում առանձնակի տեղ է գրավում: Հիասքանչ բնության ու ծովի գաղտնիքների մեջ է թափանցել Երուխանի միտքը և սովորել զգալ ու մտածել այդ խորհուրդներով: Ծովի խորհրդավոր տարերքի մեջ նա որոնում է գեղեցկություն, նրա մեջ է տեսնել բնության և մարդու գեղեցկությունների ներդաշնակություն:

Ինչպես Նար-Դոսը, այնպես էլ Երուխանը պատկերում են նույն ժամանակահատվածի մեծ քաղաքների ծայրամասային թաղամասերում սովի ու աղքատության տակ կքված հասարակ մարդկանց անմխիթար վիճակը: Սակայն նկատելին այն է, որ Նար-Դոսի նովելների հերոսների նկարագրում իրեն որոշակիորեն զգացնել տվողը հարաղատների նկատմամբ ունեցած անտարբերությունն է: Ամուսինը սպանում է կնոջը և հայտարարում՝ «ի՞նչ եմ արել որ, մի մուշտի եմ տվել» («Թե ինչ եղավ հետո...»), ընտանիքի հայրը մարմնացած գաղանություն է սեփական հարկի տակ («Հոգուն վրա հասավ»), որդին գողանում է մոր ապրուստի միակ միջոցը՝ հավը («Սև փողերի տոկոսը»):

Բուրժուական հարաբերությունների բուռն զարգացումը քաղաքում, իրոք անողորմ կերպով կտրել է հարազատների սուրբ ու ազգակցական կապերը: Մարդիկ դիմազրկվել են, հույզը չորացել, գերիշխում է բնազդը, որը շատ հաճախ գազանային երանգներ է ընդունում:

Երուխանի նովելներում ընտանիքը գրեթե միշտ հանդես է գալիս առանձին, այն ինքնամփոփ միավոր է: Սակայն այդ փոքրիկ միավորի մեջ ընտանեկան հարաբերությունների համար բնորոշը հովվերգական բարությունն է:

Երուխանի հերոսներն ընտելացել են ստեղծված դրությանը։ Նրանք չեն վախենում թշվառությունից, ընդհակառակը, արհամարհում են այն, հոգով բարձր են ու եթե սիրում են, ապա այդ սերը մարդկայնորեն ուժեղ է և անկեղծ, եթե ուրախանում են, մի բան, որ հաղվագյուտ է պատահում, ապա կարողանում են ուրախանալ հոգու ամբողջ թափով։

Սրբալան երկյուղածությամբ Երուխանը փայփայում է այն ճշմարիտ հավատամքը, թե բոլոր հոգևոր գեղեցկությունների միակ և անսպառ աղբյուրը «խոնարհ դասակարգն» է։

Երուխանի նովելները լույս էին տեսնում ժամանակի պարբերականներում։ Ուշագրավն այն է, որ յուրաքանչյուր վերնագրի տակ հեղինակը դրել է նաև ենթավերնագիր-ծանոթագրություն՝ ժողովրդական բարֆ, ժողովրդային պատմություն, իրական կյանքե պատկեր մը, պարզ պատմություն, կյանքի պատկեր մը, իրական կյանքե պատկերներ, գաղթականի հուշատետրես, ժամանակակից բարֆեր։

Նրա նովելային աշխարհը բնակեցված է գերազանցապես դժբախտ հերոսներով։ Այլ կերպ լինել չէր կարող, քանզի նա սյուժեները վերցրել է կենդանի իրականությունից՝ սուլթանական արյունոտ ռեժիմի, ահավոր հետամնացության շրջանից և իր տեսածը, ապրածն ու զգացածը գեղարվեստորեն արտահայտելու համար չի որոնել վերերկրային, անիրական կերպարներ։

Երուխանի նովելների առանձնահատկություններից մեկն այն է, որ հեղինակի նկարագրածը իրական է, իսկ ինքը՝ նովելում ծավալվող իրադարձությունների ակտիվ մասնակից։ Մարդկային կյանքի բարդ ոլորտը թափանցելը, նրա ծալքերում խնամքով թաքնված իրողությունները հետազոտելը և դրանց գեղարվեստական մարմնավորումը կազմում են Երուխան-նովելիստի նկարագրի շեշտված գծերը։

Նովելիստի համար բնութագրականն այն է, որ նա հանդես չի գալիս որպես սոսկ հետևող, սառն ու անտարբեր դիտող, այլ ձգտում է ձուլվել հերոսի անհատականությանը։ Նա հետզհետե խորամուխ է լինում իր հերոսի հոգևոր դրամայի մեջ. «Հանկարծ սթափեցա հառաչանքե մը, սրտի անդունդներեն դուրս պոռթկացած ու իր հետ բերելով ավերակ, ջարդուփշուր սրտի մը սփոփանքը»։

Մեկ այլ նովելում («Վրեժը») գիշերային պահ է, ծովի վրա սուրում է նավը, տախտակամածին կանգնած՝ ծանր տվայտանքների մեջ է նովելի հերոսը։ Երուխանը հետևում է նրան, ձգտում է վերծանել այն, ինչը մնում է անարտահայտելի, խորհրդավոր ու անմեկին։ Սա հեղինակի ստեղծագործական երկունքի մի պահն է, որտեղ լարումը հասցնում է շիկացման. «...Այդ սրտաճմլիկ տխրության առջև անդիմադրելի պետք մը կզգայիր իրեն դիտելու և լսելու. «Բարեկամ, ի՞նչ է վիշտդ, արդյոք, կրնա՞մ սփոփել քեզ, ըսե՛, խոսե՛, թեթևացի՛ր, գուցե ճար մը կա»։

Անհատի հոգեկան գալարումներն ու տագնապը անմիջապես կամուրջ են ցցում հեղինակի և իր հերոսի միջև։ Երուխանը անձեռակերտ կամուրջով զգուշորեն և հետազոտողի խորաթափանց հայացքով քայլում է դեպի երկի հերոսը, սուզվում նրա ներաշխարհը։ Մի քանի ցայտուն վրձնահարվածներ, և ընթերցողին ներկայանում է մի ընդգծված բնավորություն՝ իր ուրույն հոգեբանությամբ։ Եվ որովհետև նովելիստին հաջողվում է վերապրել նաև իր հերոսի

ներքին հույզն ու խոհը, վշտերն ու մորմոքը, կերտած պատկերը տեսանելի է, կերպարը՝ տիպական։

Երուխանի հերոսները կյանքի նկատմամբ շատ չափավոր պահանջներ են ներկայացնում։ Շատ քչով բավարարվող այդ մարդիկ երբեմն իրենց կյանքը համարում են նաև «անամպ, խաղաղ ու շենշող» («Սերինա»), մաքառում են, տանջահար լինում, սակայն չեն դժգոհում, տրտնջում են դեպքից դեպք։ Նրանց ամենադաժան պայքարը մի պատառ հացի համար հաճախ իրենց իսկ կողմից դիտվում է որպես կյանքի զարգացման բնականոն ընթացք։

Սակայն, որպես կանոն, այդ հերոսները հատկապես դժգոհում են, երբ ձախողվում են կամ մերժվում սիրո մեջ։ Այս ֆոնի վրա գլուխ է բարձրացնում կոնֆլիկտը։ Ինտիմ անհաջողությունը բացում է հերոսի լեղուն, աշխարհի անարդարությունների դեմ նրա հոգում կուտակված մաղձը նոր միայն դուրս է ժայթքում։

Երուխանի նովելների հիմքում ընկած կոնֆլիկտը, որը առավելապես ստանում է ողբերգական լուծում, բխում է մարդու վառ երազանքների և նրան մանրացնող բիրտ իրականության միջև եղած հակամարտություններից։ Հեղինակի նախընտրած հերոսները՝ հասարակ աշխատավոր մարդիկ, իրենց վիրավորված հոգում, կոշտ արտաքինի տակ ունեն քնարական ընքշություն, անկեղծություն, արդարախոհ են և հանդես են գալիս որպես իրենց ծնած դասակարգի ուժի և գեղեցկության կրողներ։

Տալով հասարակության ուժերի փոխազդեցությունը հերոսների արարքների պատկերմամբ, Երուխանը հոգ է տանում՝ չխախտել իրական կյանքի և նրա գեղարվեստական ընկալման ու մարմնավորման միջև եղած ճշմարիտ հարաբերությունը։ Գեղագիտական այս չափանիշի կիրառումը առարկայացված ձևով ուրվագծում է պատկերվող միջավայրի բուն ոգին։

Երուխանի մի շարք նովելներ, զուրկ լինելով սոցիալ-հասարակական բարձր հնչեղությունից, գեղարվեստական վավերագրի ուժ ունեն և անխարդախ հայելու մեջ անդրադարձնում են բոլոր դեպքերում մարդ մնացող հերոսների աշխարհը։ Նրա հերոսները մարդկանց և աշխարհին նայում են անկեղծությամբ և անմիջականորեն։

Երուխանը պարզորոշ տեսնում է, որ իր ժամանակի հասարակության մեջ մարդկային նկարագրի լավագույն գծերը արժեքազրկված են, որ մարդու սրբազան և անբիծ զգացումները գռեհկացվում են ու տրորվում ցեխի մեջ։ Եվ ժամանակաշրջանի հատկապես հակահումանիստական այս խորշակն է, որ ոչնչացնում է Երուխանի դրական հերոսին։ Երուխանի հերոսների համար բավական է կյանքի մի փոքրիկ ցնցումը, և նրանք խորտակված են։ Սակայն նրա դրական հերոսների համար հատկանշականն այն է, որ նրանց խորտակումը ավելի շուտ գեղեցիկ նահատակություն է, քանզի հերոսը տեսնում է իր անկումը՝ «Ես մարդկայնորեն մարդ մնացի» սփոփիչ գիտակցությամբ։

Մարդկային սիրտը բացելու և նրանում տեղի ունեցող անցուդարձերը բացահայտելու գրական հակումը նովելիստ Երուխանի ստեղծագործության ամենաբնորոշ գիծն է։ Երուխանի հերոսները մեծ մասամբ չեն ենթարկվում դարի եղծանող ու մաշիչ ազդեցությանը և մինչև վերջ սրբազան երկյուղածությամբ ու խնամքով պահպանում են մարդկային ազնիվ զգացմունքները և բնավորության լավագույն գծերը։

Երուխանի գեղագիտական իդեալը մարդուն մարդ պահելն է, և նա գերազանցապես հրապուրվում է այդպիսի հերոսներով, սակայն իր մի շարք նովելներում նա կերտել է տիպեր, որոնք զերծ չեն նկարագրի հիվանդագին ախտահարումից։ Դրանք այն մարդիկ են, որոնք ընկել են դրամի համար մղվող պայքարի հորձանուտը («Վարձու տուն», «Հուռութքը», «Քավություն»)։

Ինչպես Նար-Դոսի, այնպես էլ Երուխանի հերոսները ապրում և գործում են մեծ քաղաքների արվարձաններում։ Որպես անմիջական արդյունք բուրժուական հարաբերությունների բուռն զարգացման, առաջ է եկել կապիտալիստական խոշոր արտադրությունը, և Նար-Դոսի մանր արհեստավորները զրկվել են իրենց արհեստով նախկին ձևով ապրելու հնարավորությունից։ Երուխանի հերոսների մեծ մասը ապրում է դեռևս նախնիներից ժառանգած ավանդական արհեստով, չնայած ակնհայտ կերպով երևում է, որ առևտրի ասպարեզում նոր ու անսովոր երևույթներ են երևան եկել նաև Երուխանի հերոսների միջավայրում։ Այստեղ էլ բուրժուական հարաբերությունները հոշոտում են և կլանում համեմատաբար փոքր առևտրականներին։ Հասարակության անդամի միամտությունից և այդ նույն հասարակության միջև ծագած բախումից Երուխանի հերոսների անձնական դրաման հուզիչ երանգներ է ստանում։

Երուխանի նովելներում առավել ցնցող դրամա է ապրում կինը։ Խուսափելով միակողմանիությունից, նա կերտել է կնոջ լիարժեք կերպարը՝ իր բազմազան դրսևորումների մեջ։ Երուխանի նկարագրած կինը նվիրական իդեալների կրող է։ Նա ուժգին սիրել գիտե, հավատարիմ կին է, մոլեռանդորեն սիրող մայր, գեղեցիկի կրող է, արժանապատվության բարձր գիտակցության նախանձախնդիր։ Սերված լինելով ժողովրդական «խոնարհ» խավերից և ապրելով սիրելու և փաղաքշելու համար բոլորովին աննպաստ պարագաներում, Երուխանի պատկերած կինը հատկանշական է իր կանացի հրապույրներով։ Նա չափազանց զգայուն է, գիտե հափշտակվել իր նախընտրած տղամարդով, ձուլվել նրա էությանը, իսկ սիրած տղամարդուն կորցնելու դեպքում ապրել իր վիպային ու անիրական պատրանքներով։ Երուխանի դրական կին հերոսը հավերժական սիրահար է, կանացի զտարյուն գծեր ունի։ Կողմնակի ոչ մի հովեր չեն դիպել նրա կին հերոսներին։ Անխառն այդ հերոսուհիները չեն պճնվում, չեն սեթևեթում ու հենց դրանում է տղամարդկանց հաճելի լինելու նրանց արվեստի հմայքն ու գրավչությունը։ Գեղարվեստորեն ցուցադրելով իր հերոսուհիներից մեկի վարքը, Երուխանը գրում է. «Անոր սիրտն ամենազգայուն կշիռ մըն էր, որուն վրա հյուլեի մը ծանրությունն իսկ կրնար ազդեցություն մը բանեցնել» («Տապանագիրը»)։ Երուխանի հերոսուհին զգում է, որ անզոր է և մնում է լուռ ու հպարտ, անէանում է, սակայն հպարտորեն է կրում իրեն բաժին հասած ճակատագրական թախիծը։

Ընտանեկան երջանկության կանացի իդեալը, սակայն, դիպչում է հիվանդոտ դարի սառն ու անտարբեր պատերին ու ջարդուփշուր է լինում։ Այդ նուրբ էակը սեր է երազում, բայց կոպիտ իրականությունը փուշ ու արցունք է հրամցնում նրան։

Երուխանն իր առջև խնդիր չի դրել գեղարվեստորեն մարմնավորել պատկերվող ժամանակի սոցիալ-քաղաքական մեծ պրոբլեմները։ Նրա հերոսները հիմնականում գործում են արյունոտ իրականության կնճռոտ հարցերից դուրս, և հեղինակը թափանցում է նրանց մասնավոր կյանքի մեջ, նրանց ներաշխարհը՝ զբաղվելով մարդու անձնական դրամայի բացահայտմամբ։ Իրակա-

նության գեղարվեստական պատկերման այդ ուղիով հեղինակը հանրագումարի է բերում իր հերոսների ներաշխարհում խլրտացող հույզերը՝ ակնբախորեն ցույց տալով, որ իր կերտած կերպարների անձնական դրաման բխում է տվյալ դարաշրջանի սոցիալ-քաղաքական ընդհանուր վիճակից։ Այս գաղափարի բացահայտ դրսևորումը նովելներում չկա, բայց թաքնված միտումը տրոփում է յուրաքանչյուր տողի մեջ։

Երուխանի ստեղծագործության ինտելեկտուալիզմը աչքի է ընկնում ուրույն գծերով։ Նախ՝ նրա հերոսները տկար ու անուժ են հասարակական կյանքի, ինչպես նաև կենցաղի առեղծվածների դեմ հանդիման։ Երուխանի հերոսները, որպես կանոն, իրենց արարքներում առաջնորդվում են ժողովրդական իմաստությամբ։ Սիրո և հավատարմության, աշխատանքի ու արդար վաստակի, ընկերասիրության և հասարակության մեջ գրված տեղի, կենցաղի, վարքի ու բարքերի մաքրության շատ հարցերի գեղարվեստական մեկնաբանմամբ Երուխանի հերոսների ըմբռնումները ստանում են համամարդկային երանգներ։

Երուխանը հոգեբան արվեստագետ է։ Գրողի նրա խառնվածքի համար բնորոշ է աճող հետաքրքրությունը մարդու ներաշխարհի և հոգեբանության նկատմամբ։ Ցուցադրելով ֆիզիկական արատ ունեցող իր հերոսներից մեկի՝ Կումիկի («Կուղը»), մարմնական և հոգեկան վերքերը, նովելիստը անհատի մանրանալն ու անկումը բացատրում է նաև հոգեբանական դրդապատճառներով։ Ապացույց՝ նովելի հակիրճ, բայց շատ խոսուն ավարտը. «Բժիշկ մը վայ-ցուցին։ Սա՝ հետ քննության՝ հաստատեց, թե Կումիկ մեռած էր իր վերքերեն։ Ու բժիշկը կսխալեր։ Կումիկ սիրտին ցավեն մեռած էր» (ընդգծումը մերն է —Ս. Հ.)։ Այս եզրակացությունը ոչ թե սոսկ հայաբարություն է, այլ նովելում ծավալված իրադարձությունների տրամաբանական հետևանքը։ Հեղինակային այդ եզրակացությունը միևնույն ժամանակ բանալի է՝ սյուժեի և նրանում եղած գաղափարի ընկալման համար։ «Սիրտին ցավեն մեռած էր» եզրահանգումը նովելի նախադրությունից մինչև լուծումն ընկած գործողությունների դրամատիկ զարգացման հաստատումն է, անհատի անիմաստ կյանքի կործանման պատճառաբանությունը։

Շեշտը դնելով հատկապես հերոսների արարքների հոգեբանական դրդապատճառների բացահայտման վրա, Երուխանը ընթերցողի միտքը տանում է նկարագրվող կերպարների ներաշխարհը։ Երբեմն Երուխանի հերոսները ընդհուպ մոտենում են փայփայած իդեային, երազանքների ու ձգտումների վերջնագծին, բայց հենց այստեղ էլ տեղի է ունենում առաջին հայացքից տարօրինակ և անսպասելի թվացող ավարտը՝ մեծամոգաբար մերժում («Զուկին փոխարեն», «Երկու երդումները») կամ կսրուկ հրաժարում բաղձալիից («Զրկնորսին սերը», «Քարիտեզմին»)։

Նման առանձնահատկության շնորհիվ Երուխանի նովելները ակտիվացնում են ընթերցողին՝ ստիպելով ետադարձ հայացք նետել և վերաիմաստավորել կարդացածը, խորհել, քննել։ Ընթերցողի մտավոր ներթափանցումը նովելային իրադարձությունների խորքը նրան բերում է այն համոզման, որ, այո՛, նովելի այդօրինակ ավարտը բնականոն է և տրամաբանական՝ շնորհիվ հեղինակի հոգեբանական նուրբ և բարձրարվեստ վերլուծությունների։

Երուխանի նովելներում ողբերգականի գեղարվեստական մարմնավորումը առաջացնում է կարեկցանքի զգացում, իսկ հոգեբանական դրդապատճառներով

հիմնավորված կարեկցանքը բխում է սոցիալական միջավայրից։ Նրա նովելներում շոշափված գաղափարների ամբողջությունը ոչ այլ բան է, քան կոպիտ, հակահումանիստական իրականության մերկացումն ու ժխտումը։

Երուխանն ունի սոցիալական որոշակի ըմբռնումներ և համոզմունքներ։ Դասակարգային հասարակության մեջ նա պարզ տեսնում է հասարակ մարդկանց անլուր շահագործումը, նրանց իդեալների խորտակումը, սակայն բրնաղատական ռեալիզմի նույնիսկ դեմոկրատ ներկայացուցիչներին հատուկ աշխարհայացքային որոշակի սահմանափակության պատճառով չի գիտակցում շահագործումից ազատագրվելու իրական ուղիները։ Երուխանի ինչպես գրական, այնպես էլ հրապարակախոսական երկերում անհնար է գտնել այն հարցի կոնկրետ պատասխանը, թե ինչպե՞ս է գալու ցանկալի արշալույսը։

Ինչպես ձևի, այնպես էլ բովանդակության տեսակետից Երուխանի նովելները բարձրարվեստ նմուշներ են։ Վարպետ գրողը, օգտագործելով գեղարվեստի ընձեռած ճոխ ու բազմազան միջոցները, հյուսում է գեղեցիկ պատկերներ, սեղմ տողերում կարողանում է ասեղնագործել հերոսների ջերմ ու սրտառուչ ապրումներ, հույզեր, հոգեբանական նուրբ երևույթներ։

Պահպանելով նովելի ավանդական պատմողական ձևը, Երուխանը այդ ժանրին մոտենում էր կյանքից և ոչ թե նախօրոք մշակված սխեմաներից ու գաղափարներից։ Երուխանի մոտ մարդկային հարաբերությունների, ինչպես նաև իրերի ու երևույթների մեջ տեղի ունեցող անցումները ներքնապես տրամաբանված պատճառաբանություն են ստանում։ Նրա նովելներում գեղարվեստական մարմնավորում են ձեռք բերում կյանքի ինչպես սովորական, հաճախ կրկնվող, տիպական, այնպես էլ արտասովոր, պատահական երևույթներն ու փաստերը, որոնք, իհարկե, բխում են նկարագրվող իրողության բնորոշ, տիպական աղբյուրներից։

Իրականության մեջ շատ հաճախ սովորականի սկիզբն անսովորն է, որը նախքան տիպական դառնալը, զուրկ է հասարակական սուր հնչեղությունից։ Այդուհանդերձ, հաճախ կրկնվողի վերածվելու ակնհայտ նախանշաններ ունեցող պատահականի գեղարվեստական մարմնավորումը հնարավորություն է ընձեռում ավելի խոր ճանաչելու սովորական-տիպականը։

XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներում համաշխարհային նովելիստիկայի պատմության մեջ որոշակիորեն նկատվում է մի շատ կարևոր երևույթ՝ նովելի ծավալի զգալի սեղմում։ Նույն երևույթը նկատվում է նաև արևմտահայ նովելիստների ստեղծագործության մեջ. Զոհրապի, Երուխանի լավագույն նովելների ծավալը կազմում է չորսից վեց էջ։ Իրականությունը գեղարվեստական խտացված ձևի մեջ ներկայացնելու ասպարեզում Երուխանը հանդես է բերում անվիճելի տաղանդ ու մեծ վարպետություն։

Երուխանի՝ կյանքի կարոտով տոչորվող և սակավախոս հերոսները մարդկային խոսքով անարտահայտելի զգացմունքները արտահայտում են դիմախաղ-մնջախաղով, ժպիտով ու արցունքով, մանավանդ նովելի էջերից աննկատելիորեն կերպավորվող մարդու տխուր աչքերով ու զգացմունքային ձայնարկություններով։

Ինքնաբացահայտման պահին հատկապես բազմանշանակ արցունքը ընդգծված ձևով հաճախ է հանդիպում և հերոսի անձնական դրամայի ու խոսքով անարտահայտելի զգացմունքների խոսուն արտահայտիչն է։

Երուխանի նովելներում սյուժետային գծի դրսևորման գլխավոր ձևը հեղինակային պատումն է։ Իրադարձությունների ծավալումն ու ընթացքը, գործողության զարգացումը, հերոսների արարքները, բնավորությունն ու հոգեբանությունը թրծվում, առարկայացված տեսք են ստանում հեղինակի պատմելաձևում։ Այս ճանապարհով ստեղծված պատկեր-գործողությունը երբեմն միայն ուղեկցվում է գրական կերպարների միջև տեղի ունեցող երկխոսություններով։ Այստեղ իրենց զգացնել են տալիս ներքին բարձր լարում ունեցող խոսքը և երկխոսությունների ու մենախոսությունների ուժը։ Հերոսների հակիրճ տրամախոսությունը ընթերցողի հայացքի առջև բացում է մի ամբողջ աշխարհ, աչքի է ընկնում բովանդակության հարստությամբ։ Երկխոսությունների և մենախոսությունների մի հպանցիկ դրվագ՝ և Երուխանի հերոսները ներկայանում են որպես որոշակի բնավորություններ, տարբեր խոհերով ու հետաքրքրություններով ապրող ընդգծված անհատականություններ։ Բնորոշն այն է նաև, որ Երուխանի հերոսը վրուցում է սեփական եսի հետ։ Այս ճանապարհով հեղինակը հասնում է հերոսի ինքնաբացահայտման։ Գրական կերպավորման այս եղանակը Երուխանի նովելների ցայտուն առանձնահատկություններից մեկն է։

Երուխանի նովելներում հերոսների խոսքաարտահայտչական պասսիվությունը լրացվում է նրանց ակտիվ դիմախաղով։ Այստեղ գրական հերոսի լուռ նայվածքը, աչքերի արտահայտությունը, խոհա-հուզական որևէ ժեստը կամ հառաչանքը լեզվից ավելի պերճախոս են։ Նրանք «խոսում են» դրսևորելով հերոսի և իրականության միջև եղած լուռ բախումը։ Երուխանի նովելներում վերոհիշյալ առանձնահատկությունը ընդգծված սկզբունքից է բխում։ Գրական կերպավորման հենց այդ սկզբունքով էլ նա, ասես, կատարում է Բուալոյի այն հանրահայտ պահանջը, թե «բառերի սահմանը նեղ լինի, իսկ մտքերինը՝ ընդարձակ»։ «Վերջին առաջարկը» նովելում երիտասարդ տղան ու աղջիկը առաջին անգամ իրար են հանդիպում մեծաշուք երեկույթում, սիրահարվում են։ Նրանք, սակայն, չեն արտահայտվում (դա, ինչ խոսք, կընդարձակեր նովելի ծավալը), այլ միմյանց հետ «խոսում են» հայացքներով։ Տղան ու աղջիկը լուռ պարում են, բայց այդ լռությունը՝ մնջախաղ-դիմախաղը, շատ բան ասող գործողություն է։

Ծովում խեղդվում է ձկնորս Հուսեփը («Լվացարարուհին»)։ Նրա սիրած աղջիկը՝ լվացարարուհի Սուրբիկը, ապրում է ծանր ու ցնցող դրամա։ Երուխանը իր հերոսուհու ողբերգությունը բացահայտում է նրա դիմախաղով։ Այդ մնջախաղ-դիմախաղում ասես պերճախոս լեզվով պատմվում է այն մասին, թե ինչպես է ջրախեղդ ձկնորսը շարունակում ապրել խոնարհ կույսի հոգևոր աշխարհում։

Երուխանի ոճի համար առանձնահատուկ է և այն, որ շատ հաճախ հեղինակային պատումն ու նկարագրությունները իրենց տեղը զիջում են գրական հերոսների ներաշխարհի ինքնաբացահայտմանը։ Նման պարագաներում հաղորդակցման ներքին ակորդները աչքի են ընկնում խիստ սակավախոսությամբ, բայց և, ընդհակառակը, գործողության հարստությամբ, շատ բան ասելու պոռթկումով և միմյանց ըմբռնելու արվեստով։ Ու այսպես, գրական հերոսները հասկանում են և ըմբռնում միմյանց, իսկ ընթերցողը՝ հերոսներին ու հեղինակի միտումը։ Այսպես՝ «Տապանագիրը» նովելի երիտասարդ նորապսակները ավանդական ծիսակատարության նպատակով գնում են գերեզմանատուն։ Նրանք լուռ քայլում են կողք-կողքի։ Երիտասարդը սրտով կապված չէ իր հարսնա-

ցուին, նրա իսկական սերը թաղված է գերեզմանոցում։ Այնումենայնիվ, նա իր կողքից ընթացող աղջկա նկատմամբ ուշադիր լինելու ձիգեր է անում, սակայն երիտասարդի շարժումները բռնազբոսիկ են, սրտի թելադրանքներին հակառակ։ Աղջիկը հաղորդակից է տղայի հոգեկան ապրումներին և իր ենթադրությունների մեջ համոզվելու համար դիտում է, հետևում ու զննում։ Նա իր արտահայտած մտքերի ու շարժուձևի առաջ բերած տպավորությունը ձգտում է տեսնել և կարդալ երիտասարդի դեմքի վրա։ Եվ այդ բանը հերոսուհուն հաջողվում է։ Այստեղ արտաքինը դառնում է հայելի, որի մեջ դրսևորվում է հերոսի ներաշխարհը։ Նովելի հերոսուհին սրտի անհուն կսկիծով, բայց և անսխալ կռահում է երիտասարդին համակած խոհի իմաստը՝ տղան փնտրում է իր իսկական սերը, կորցրած Մաքրիկին։

Երուխանը հատուկ խնամք է տանում նովելի մուտքի և ավարտի վերաբերմամբ։ Մուտքը նրա մոտ կա՛մ առարկա-պատկեր է, կա՛մ գործողություն-պատկեր։ Երկու դեպքում էլ դրամատիկական երկի կամ կինոսցենարի ռեմարկի տպավորիչ նմուշ հանդիսացող մուտքը տեսանելիորեն իր մեջ խտացնում է տվյալ նովելի գաղափարական աղը։ Ավարտը Երուխանի մոտ շատ ավելի է համապատասխանում նովելի ժանրային առանձնահատկություններին։ Հիմնականում անսպասելի, բայց շատ համոզիչ ու իրապաշտ ավարտը որոշ նովելներում («Պստիկ Սեփին պատմությունը», «Թաշկինակը», «Ջրհանկիրի մը պատմությունը»), սակայն, անիրական է, չնայած հեղինակը ձգտում է ստեղծել իրականի պատրանք։

Բնությունը Երուխանի նովելների անբաժանելի տարրն է, գրական հերոսի սրտի տրոփյունը, մեծ իմաստ ունեցող բնանկար, որը ձուլվելով կերպարին, ավելի շոշափելի է դարձնում գրական հերոսի դիմանկարը և նրա հոգեբանությունը։ Այն, ինչ դժվարանում է արտահայտել նովելի հերոսը, պերճախոս ձևով բացատրում է բնանկարը։ Երուխանի վրձնած բնանկարը ծովափնյա ժողովրդի հավաքական կերպարի հոգեբանությունն է։ Ծովի մռունչն ու կոհակների վետվետանքը, գիշերային պատկերները և աշնանային հեծյունները, երաղանքի պահերն ու հանդարտորեն իջնող ձյունը, միալար անձրևն ու տապահեղձ շոգը, նավերին ուղեկցող դելֆիններն ու ծովի սպիտակ փրփուրների վրա թևաբախող ճայերը Երուխանի նովելներում վարպետորեն «մարդկայնացվում» են։ «Հուզվող» ու «խորհող» բնությունը դաշնավորում է տառապող հերոսին՝ իր գեղեցկությունների մեջ ցուցադրելով մարդ-անհատի գեղեցկությունները, իսկ սարսուռների մեջ՝ այդ անհատի ներաշխարհային տվայտանքները։ Ցուցադրելով մարդու և բնության դաշնությունը, Երուխանը հակադրվում է մարդ-անհատին մանրացնող բիրտ իրականությանը։ Աշխարհը անհուն վիշտ է պատճառում մարդուն, իսկ բնությունը, ընդհակառակը, սփոփում ու մխիթարում է նրան։

Այս ֆոնի վրա էլ Երուխանի նովելներում բացահայտ կոնֆլիկտ կա նաև իրականության ու բնության միջև։ Ընդունելով ավելի մեծ խորհուրդ, բնությունը ձուլվում է մարդուն, նույնանում նրան։ Ու այս իմաստով էլ բնության և իրականության միջև եղած կոնֆլիկտը կարելի է դիտել որպես մարդու և իրականության բախում, քանի որ Երուխանի մոտ բնությունը ոչ թե անկենդան է, այլ «մտածող»։ Նովելիստը պղտոր ջրի խորհրդավոր մռունչից դնում է տառապող հերոսի հոգոցների աշխարհը, հայրենի դեղեցիկ և թախծոտ բնապատկերներից՝ դեպի վշտամորմոք հերոսների ինչ-որ բան ակնկալող հա-

յացքների անհունը։ Այսպիսով, բնապատկերը Երուխանի նովելներում գրական կերպարի ներաշխարհի կամ նկարագրվող իրադրության հարազատ թարգմանն է։

Իր նովելներում Երուխանը կերտում է գեղեցիկի էությունը ցուցադրող շողշողուն մակդիրներ։ Այսպես օրինակ՝ դեռատի աղջկա արտաքին բարեմասնությունները ցույց տալու համար նա օգտագործում է վարդերանգ դեմք, լեցուն, կլորիկ արմունկներ, մանկամարդ աղջկա մեղույշ աչքեր, քաղցր ու ոսկեզօծ հյուս մակդիրակիր արտահայտությունները («Մարկոս աղբոր սերը»)։ Այս և նման մակդիրների ընտրությունը պայմանավորված է նովելի հակիրճությամբ ու հեղինակի գեղարվեստական մտածողությամբ։ Նմանօրինակ մակդիրակիր բառակապակցությունների յուրահատկությունն այն է, որ առարկայի հատկանիշի ցուցադրմամբ ընթերցողի երևակայական պատկերացումների մեջ որոշակիորեն ստեղծվում է առարկայի և նրա կատարած գործողության պատրանք։ Երուխանի կերտած մակդիրը աչքի է ընկնում ներքին լարված դինամիկայով։ Այս առանձնահատկության շնորհիվ մակդիր-էպիտետը ոչ միայն դիպուկ բնորոշում է, ասենք, պարմանիի և պարմանուհու արտաքին գեղն ու հմայքը, այլ նաև նրանց ներաշխարհային շարժումը, ոչ միայն հերոսներին շրջապատող միջավայրը, այլ նաև այդ միջավայրում տեղի ունեցող գործողությունը՝ լուսափողփող աշխարհ, մեռելաբույր վայր, հրաշազուն ոստան, բազմաժխոր բազմություն, գեղունակ դեմք, բոցավառ սեր, սաստկատենչիկ իդեալ, ոսկի հույսեր, աղջիկ գեղանազ, պարկեշտասուն օրիորդ, խանդակաթ նայվածք, սիրատարփիկ զույգ, սրտակեղեք մրմունջ, նեզիկ սյուք, հուզյալ սիրտ, նազելագեղ կեցվածք, դեմքը մահատիպ դալուկով աչքեր։

Հերոսի արարքը բնութագրող դինամիկան ավելի ուժգին արտահայտություն է ստանում գործողության հատկանիշը ցուցադրող ետադաս պարագաների (գործողության մակդիր) տեղին գործածության շնորհիվ. «կնայեր սպիտակ քարին սևեռասպինդ», «պահ մը կանգ առնելով ակնապիշ», «գերեզմանաքարերը կղններ տարտամ ակնարկով», «չորս դին նայեցավ խելահեղորեն» («Տապանագիրը»)։ Պատկերավորման այս եղանակով հեղինակը հերոսի արարքում առանձնացնում է ամենագլխավորը, ստեղծելով դրա տեսանելի պատկերը։ Գործողության այսօրինակ շեշտվածությունը երկի հերոսին երևան է հանում իբրև որոշակի բնավորություն, որի արարքը բխում է ներքին լարված հուզաշխարհից, և կերպարի որոշակի հոգեվիճակի գործնական դրսևորումն է։

Ծավալի փոքրացման և բովանդակության «մեծացման» ճանապարհով Երուխանը նովելի ժանրում հասնում է զգալի հակիրճության։ Այստեղից էլ հեղինակի ոճական այն առանձնահատկությունը, որ բառը, նախադասությունը ունեն մեծ տարողություն և սեղմ ձևի մեջ պարփակում են լայնածավալ գործողություն։ Երուխանի նովելներում բառ-միավորը ավարտուն, պերճախոս գործողություն է։

Երուխանը կերտում է պատկերավոր համեմատություններ ու էպիտետներ, շրջուն շարադասություններ, փոխաբերություններ և փոխանունություններ։ Նա օգտագործում է նաև երգիծական արվեստի բազմազան տեսակները՝ հեգնանք, խոսքի ու դրության կոմիզմ, իսկ բացասական տիպերի նկատմամբ՝ սպանիչ ծաղր՝ սարկազմ։ Խոսքի պատկերավորման ու արտահայտչական միջոցները խստագույն ճաշակով ծառայեցնելով իր գեղագիտական իդեալի բա-

ցահայտմանը, Երուխանը դրանով ավելի ու ավելի սեղմում է նովելի ծավալը և, ընդհակառակը, ընդլայնում բովանդակությունը։

Երուխանի նովելներում կերտված համեմատությունները, արտահայտելով երևույթի ու եղելության ամենաէական հատկանիշը, դիտվում են որպես խտացված առարկա և խտացված գործողություն, որոնք բացահայտվում ու ծավալվում են ընթերցողի երևակայության մեջ։ Ստեղծագործող նովելիստն ու «ստեղծագործող» ընթերցողը լրացնում են միմյանց։

Երուխանի ստեղծագործությունների լեզուն գրական արևմտահայերենն է, որը երբեմն-երբեմն միայն կրում է թրքաբանության (աճապ, բապուճ, պենկին, թուլումպա, լաֆ), բարբառայնության (ծառք, ծուկ, սվոնք), գրաբարի (ի տղա տիոց, ի նա, ջուրց մեջ, կթափանցե ի ներքո ի քեզ) դրոշմը։ Նկատելին այն է, որ նովելներում հեղինակային պատումը զերծ է լեզվական վերոհիշյալ շերտերից, որոնք երևում են գրական հերոսների երկխոսություններում ու մենախոսություններում։

Երուխանի կերպարների լեզվամտածողությունն՝ ու լեզվաարտահայտչականությունը պայմանավորված են հենց այդ մարդկանց մտավոր կարողություններով, սոցիալական միջավայրով, շրջապատով ու զբաղմունքով։ Եթե Գրիգոր Զոհրապի հերոսները գերազանցապես բարձր խավի մարդիկ են և. բնականաբար, օգտագործում են գրականորեն ընտիր բառեր ու արտահայտություններ՝ ձգտելով իրենց լեզվամտածողությանն ու լեզվաարտահայտչականությանը հաղորդել փայլ ու պերճություն, ապա Երուխանի հերոսները իրենց գործածած բառերում, դարձվածքներում ու արտահայտություններում մնում են որպես «խոնարհ դասակարգի» մարդիկ։ Եվ այլ կերպ լինել չէր կարող. Երուխանի ձկնորսն ու լվացարարուհին չէին կարող արտահայտվել այնպես, ինչպես Զոհրապի իրավաբանն ու բժիշկը։ Իր հերոսներին խոսեցնելով իրենց իսկ լեզվով, Երուխանը հարազատ է մնացել գրական կերպարի տիպականացման և լեզվական անհատականացման դրույթին։

## ХУДОЖЕСТВЕННЫЕ ОСОБЕННОСТИ НОВЕЛЛ ЕРУХАНА

С. В. ОГАНЕСЯН

**(Резюме)**

Западноармянский демократический писатель, публицист и педагог Ерухан (Ерванд Срмакешханлян, 1870—1915)—талантливый мастер новеллы. Его высокохудожественные новеллы проникнуты глубоким сочувствием к простым людям, отличаются сжатым сюжетом, тонким лиризмом, интересными диалогами.

Образный язык Ерухана красочен и богат. Без прямых оценок, с помощью средств художественного изображения и выразительности, небольших пейзажных зарисовок, краткого и меткого изображения обстановки Ерухан раскрывает мир человеческих отношений, психологию и душевную красоту своего положительного героя.